


10412



1913

Տարեթ հաւա 10. 116.
ՃԱ. 881

ՀՐԱՅՐԵԼԻ ԹԻՒՆ ՏԻԿ. ԱՐԱԽԵԿԱ ԵԶԻԳԱՆԻ

ԼԵԽՈՆ-ԼԵԽՈՆԻ

~~377887~~

ԳՐԲՈՅ Հ. 2.

„ԻՄ ԷՍՔԻՉՆԵՐԻՑ“

ՇԻՌԱՂ. 6.
ԳԵՂԵՑԻԿԻ ՏԵՆՉՈՂ. 6



(201)

Վաղարշապատ
Եղիբարաշարժ Տպարան Մ. Աթոռոյ

1913

891.99
L-44

2003

Հ Արմ.
2-6133 $\frac{1}{2}$ ₂

2-6133 $\frac{1}{2}$ ₂

Ա. 884

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴԱՐԱՆԻ ՏԻՄ. ԱՐԵՎԱՆԻ ԱԶԲՈՒՅՆԻ

891.99
L-44

Լեմոն-Լեմոնի

ԳՐԱՌԱՅԻ Հ 2.

„ԻՄ ԷՍՔԻՉՆԵՐԻՑ“

Ծ Ի Ծ Ա. Ղ Ղ.
ԳԵՂԵՑԻԿԻ ՏԵՆՉՈՂԸ.



Վաղարշպատ
Եղբայրացարք Տպարան Մ. Աթոռոյ
1913

ՀԱՅ. № 20491

Խաչ

ի Մ

ԲԱԼԻԿԻՆ ՀՕԼԻԿԻՆ

Վախճանած

Թաւրիզում 1911թ. 2 յուլիս

Ներսում եմ զբոյկու

և լեհներ.

«Mon Petit, tu n'es plus et la vie recommence:
«Voici gu'autour de moi, ainsi gu'aux jours passés,
«La sève du printemps met sur les vieilles branches
«Les bourgeons qui seront des branches cet été.

Touny-Lerys.

44875- տհ.



29640-63

ԾԻԾԱՂԸ

Մի ծիծաղ է մտել քիթս և անդադար
ծիծաղեցնում է ինձ։ Նա սկսեց բարակ,
շատ թոյլ ժպիտով, որ գնալով մեծացաւ և
փոխւեց ծիծաղի։ — Նման կոհակների, որ
աստիճանաբար դառնում են լեռնանման
ալիքներ և փոթորկում ջուրը։ — Ծիծաղն էլ
յուզեց և փոթորկեց ինձ։

Ես ծիծաղում եմ սենեակում՝ միայնու-
թեանս ժամին։ Ես ծիծաղում եմ փողո-
ցում՝ մարդկանց բազմութեան մէջ։

Ես ծիծաղում եմ ամեն տեղ։
Մարդիկ, մանաւանդ կանայք նայում
են ինձ մեծ հետաքրքրութեամբ։ — Ահա այս
վերջինների դէմքին էլ ժպիտ եմ նկատում,
ժպիտ, որ զիտէ ծիծաղեցնել։ Կանայք էլ
են ծիծաղում, բայց աւելի եռանդով, աւելի
մեծ քրքիչներով։

Ես վարակում եմ կանաց ծիծաղով։
Այլիս անհնար է փողոցում մնալ։ Փախ-
չում եմ տուն, մտնում տանտիկնոջս մօտ
և ցանկանում եմ պատմել նրան ծիծաղից։
սակայն ինչ, նա էլ է ծիծաղում։

— Ինչ է պատահել, տիկին, ինչու էք
ծիծաղում դիմում եմ նրան աշխատելով
զսպել ծիծաղ։

— Պարոն՝ փողոցով անցնող կանայք
ծիծաղում էին։ պատասխանում է նա ծի-
ծաղից թուլանալով։

— Բայց, ներեցէք, տիկին, դուք ինչ
ունէք ծիծաղելու, և այն էլ այնպիսի թա-
փով, որ կարող է խախտել ձեր առողջու-
թիւնը. ասում եմ ես։

— Ոչինչ սեռակիցներիս ծիծաղը ինձ
մոռացնել է տալիս ամեն ինչ։ Օ, պարոն,
նրանք բոլորը, բոլորն էլ ծիծաղում էին և
ինչպէս . . . Ցաւում եմ, որ չեմ ընկերացել
նրանց. — Երեկ դա նորութիւն է, մի նոր
մօդա այսօրւանից քաղաք մտած. — Ուրեմն,
բարեկամ, պէտք է ծիծաղել։

Եւ նա ծիծաղում է ուժգնութեամբ
յիրաւի մոռացած ամեն ինչ։

Ես էլ եմ ծիծաղում. ծիծաղում եմ
խենթին յատուկ ծիծաղով անդադար, ան-
վերջ . . . ինչ արած երեկ պէտք է ծիծա-
ղել, որ ծիծաղում եմ . . .

Եւ ես ծիծաղում եմ . . .

Կէս գիշեր է. թուլացած ծիծաղից ես
մանում եմ անկողին և խկոյն քնում։ Առա-
ւոտեան զարթնում եմ յոզնած, սակայն
հանդիսա՞ այն խենթ ծիծաղը էլ չկա։ Լւաց-
ւում եմ, հագնուում և ցանկանում եմ նա-
խաճաշ խնդրել. բայց յիշելով աանտիկ-
նոջս, ես վարանում եմ. —

Եթէ այն չարաճճի ծիծաղը դարձեալ
մանէ քիթս, Աստւած վկա, ես կհիւանդանամ։

Զանգահարում եմ. տիկինը բերսում է
նախաճաշը, ժպիտը երեսին բարեսում և
անցնում է։

Չէ, նրա գէմքի չարաշուք ծալքերը
բարի բան չեն խոստանում. շատ հաւանա-
կան է ճաշին նա ծիծաղելիս, իսկ ընթրի-

Քին անտանելի կլինի:

Եւ ես որոշում եմ հիւանդութեան պատրւակով թէ ճաշը և թէ ընթրիքը ուտել առանձին և չպատահել տիկնոջ: Ես վճռում եմ մանաւանդ փողոց, փողոց դուրս չգալ՝ չտեսնել կանաց ծիծաղող գէմքերը:

Ոչ ես չեմ կարող՝ այս գիշեր պէտք է գնամ պարահանդէս. ինչ կլինի իմ գրութիւնը այն տեղ՝ մարդիկ խելագար կանւանեն ինձ:

Եւ ես անցեմ կացնում իմ օրը սենեակում կարգալով և պարտէզում գլխակոր զբօնելով:

Շատ քիչ է մնացել մինչև պարահանդէսի սկսելը. Արագ-արագ սափրում եմ կարելով երեսս աջ ու ձախ, հագնում եմ նոյն արագութեամբ և նետւելով փողոց, առանց շուրջ նայելու, ես շտապում եմ կառքերի հրապարակ:

Ես կառք եմ ուզում վարձել, որ ազատ լինեմ ծիծաղողներից:

Մօտենում եմ մի կառապանի և ին-

գրում նրան ծածկել կառքը և շուտով հասցնել ինձ XXX փողոց:

— Պարոն, կառքը ծածկելու կարիք չկա. նայեցէք եղանակը ինչ . . .

— Խնդրեմ, — շտապում եմ ընդհատել նրան — յլասուն աւել կատանաք ձեր նեղութեան համար. միայն շտապեցէք՝ ժամանակս շատ կարճ է. ասում եմ ես և թոշում կառքը:

Ահա և հիւրանոցը, ուր պարահանդէսն է կազմակերպւած: Շտապ-շտապ իջնում եմ ցած. գոնապանուհին բարեում է ինձ բաւականին լուրջ ծիծաղով:

Այդ լաւ նշան չէ, անհանգստանում եմ ես, և ամեն ճիգ գործ դնում, տեղի չտալու այն անպիտան ծիծաղին, որ գիտէ յիմարացնել:

Ամենայն լրջութեամբ, սակայն ծիծաղի միկրոֆները արդէն կուլ տւած, ես բարձրանում եմ աստիճաններով:

Վահ. հէնց նախաղահլիճում պատահում եմ մի խումբ կանաց, որ խելահեզ

քըքիջներով աղմկել են օդը, թնդացնում
են դահլիճը:

Յանկանում եմ յետ դասնալ՝ չուզե-
նալով հանդէսի բաւականութիւնը, բայց երբ
վախի դիւրեկան, զրգող ձայնը դիտչում
է ականջներիս, ես կանգ եմ առնում. ու-
րախութիւնից սիրոս սկսում է արագ-արագ
բաբախել և ոտներս ակամայից վալս պա-
րելու դիրքն են ստանում:

Ել ճար չկա . . .

Մտնում եմ ներս, և ինչ, Տէր Ասո-
ւած, ամբողջ դահլիճը, որ զարդարւած
է կանացի ծաղրանկարներով (caricature),
թնդում է ծիծաղից:

Ծիծաղում են պարողները, ծիծաղում
նայողները, ծիծաղում է նոյն իսկ նւազա-
խումբը. իսկ կանայք.—ախ, այդ չարաճի
կանայք . . . կանայք . . .

Ել անհնար է սառնասրառութիւն պա-
հել.—ես էլ եմ ծիծաղում, և որքան ծի-
ծաղում եմ այնքան կարիք եմ զգում ծի-
ծաղելու . . .

— Այս, ինչ է նշանակում, եղբայր.
այս ինչ ցաւ է. միթէ ծիծաղ հիւանդու-
թիւն էլ գոյութիւն ունի. եթէ այն կա,
երգում եմ, էլ ոչ ոք չէ կարող ազատ
մնալ նրա համաճարակից՝ մեզնից իւրաքանչ-
շիւրը ծիծաղի սազմեր ունէ.

— Ամեն մի մօդա երեան գալիս միշտ
մեծ ընդունելութիւն է զտնում իւր սկզբ-
նական շրջանում, ծիծաղն էլ որ ինչպէս
մօդա, նորութիւն է, շատ բնական է, հոծ-
բազմութիւն կընդգրկէր. ասում է մէկը բա-
րեկամներիցս:

— Ինչպէս թէ մօդա. ինչ է պատահել
ձեզ. ասում եմ ես սրտնեղած:

— Լսեցէք, սիրելիս, լսեցէք, և դուք
կը համոզւէք: Ես կանգ չեմ առնում կա-
նաց զգեստների ձերի վրա, որը եթէ ոչ
շաբաթը, բայց ամիսը մի անգամ փոփոխ-
ում է.—այն քօղերի վրա, որ մերթ թըռ-
չում են նրանց սիրուն գլխին, մերթ ծած-
կում անուշ դէմքերը. Ոչ, ոչ. ես չեմ խօ-
սում կանաց կըծքերի մասին, որ յաճախ

սեղմւում են կօրսէտներով՝ աւելի մեծ,
աւելի ուռուցիկ գարձնելու, կամ ազատ
են ձգւում, մեզ խենթացնելու դիտաւորու-
թեամբ . . . Իսկ նրանց մազերի . . .

— Բայց . . . ցանկանում եմ ընդմիջել:

— Բայց ես կանգ չեմ առնում թւած-
ներիս վրա, և ձեր բարի ուշագրութիւնն եմ
հրաւիրում կանաց ձեռքերի նազանքի վրա,
որ այնքան համբոյրներ խլող է . . . Նրանց
խօսելու՝ ձայնի ելեջի վրա, որ զբաւում է
մեր լսողութիւնը ու հարկագրում մեզ մտա-
ծել միայն իրենց մասին . . . Իսկ նրանց
շրթունքների . . .

— Սակայն ծիծաղը . . .

— Յպասեցէք, սպասեցէք, բարեկամ,
ես դեռ չեմ վերջացրել: Երեկի դուք մո-
ռանում էք կանաց աչքերի սիրանուշ հայ-
ացըը, որ դիտէ դժոխք տանել . . . Նրանց
գողարիկ շարժումները (révérence) — շրջա-
զգեստների ներդաշնակւելը համաչափ քայ-
լերին, որ այնքան ուշագրաւ է . . . Իսկ
նրանց աստւածային ժպիտը . . .

— Ծնդունենք, որ այդ բոլորը աւելի
սիրելի, աւելի պաշտելի է գարձնում կնո-
ջը, կամ աւելի շուք, աւելի փայլ է տա-
լիս նրան. բայց միթէ ծիծաղն էլ կարելի է
այդպիսին ընդունել:

— Սնցուշտ այս, և աւելին.—այդ դրու-
թեան մէջ կինը շատ թովիչ, շատ դիւթող
է: Հապա նայեցէք օրինորդ իդային, նա,
որ առհասարակ քիչ է զբաղեցնում, այս օր
ուղղակի խենթացնում է ինձ . . .

— Բայց միթէ նա նոյն իդան չէ:

— Ինչպէս թէ նոյն.—դուք երբէք տե-
սել էք, որ նրա այտերը ներկւեն այդ
վարդ-կարմրով, նրա աչքերը այդ քաղցր,
սպանիչ արտայայտութիւնն ունենան, նրա
կուրծքը այդօրինակ բաբախէ և . . .

Թողնում եմ բարեկամիս և մօտենում
կանաց իմանալու նրանց կարծիքը ծիծաղի
մասին. բայց ում որ դիմում եմ ծիծաղով
է միայն պատասխանում ինձ:

Ծիծաղու ծիծաղ՝ անվերջ, անսահման . . .



ԳԵՂԵՑԻԿԻ ՏԵԽՉՈՂԸ

(Ա. Ահարոնեանին)

— Թուկ—թըրիկ:

— Ով է, անկողնում եմ. ձայնեց Սևակը
ծանրութեամբ:

— Ես եմ. լսեց նրա տանտիրոջ աղ-
ջկա կենսուրախ ձայնը:

— Ինչ կասէք. սիրելի նինի:

— Նամակ քաղաքային փոստով. ստա-
ցէք, խնդրում եմ:

— Բարի է. ասաց Սևակը և թռչելով
տեղից վերցրեց այս:

«Ժամ չէ . . . Դարձեալ «մէկը» . . . Ան-
շուշտ . . . Պէտք է գնալ . . . Այս, անպայ-
ման պէտք է գնալ . . .

«Տարիներից ի վեր ես քայլում եմ . . .
Քայլում եմ առանց գաղարի և գեռ չեմ
գտել . . . Այդ ճշմարտութիւն է; սաւը, մեր-
սեցնող ճշմարտութիւն . . .

«Օ, կեանք, կեանք . . . Եւ մարդս
այնտեղ իւր միսիթարութիւնը պէտք է գտնի
միայն քայլելում . . . Այս, միայն անվերջ
փնտռելու մէջ . . .

«Եւ ես քայլում եմ անդադար, և ես
շարունակում եմ փնտռել . . . Քայլում եմ
լացի, արցունքի միջով . . . Եւ լսում եմ իմ
յետեկց նզովք ու անէծք . . . Սիրահարները
քայլում են ինձ հետ, բայց կիսաճամփին
վհատում են ու մնում . . . Իսկ ես գեռ
քայլում եմ . . . Իսկ ես գեռ փնտռում եմ . . .
Եւ երկար, գուցէ անվերջ, ես պէտք է քայ-
լեմ . . . Ես պէտք է փնտռեմ . . .

Սևակը վերկացաւ և լւացւելուց յետո
մտաւ սեղանատուն: Նինին արդէն պատ-
րաստել էր նրա համար տաքուկ և համեղ

Նախաճաշ:

— Բարի լոյս, սիրունիկ Նինի, — 0, որպեսի նայւածք . . . Նա կարող է կործանել դժոխքի դռները և գերել, շղթայել դեերին ու սատանաներին . . .

— Սեակ . . . ասաց Նինին շարժելով իւր փոքրիկ մատը:

— Իսկ դուք չեք մերժի նստել իմ կողկին, աւելի շուտ vis-à-vis . . .

— Թողէք, ինդըռում եմ:

— Ինչու էք վշտանում, անուշիկ Նինի, երբ զիտէք, որ գեղեցիկի սիրահար եմ ես, իսկ դուք գեղեցիկ էք:

— Այդ շատ հեռու կտանէ ձեզ . . .
Սեակ:

— Ես ընկճել չգիտեմ, և միշտ ձգտում եմ դէպի հեռաւոր հորիզոնները . . .

Դէպի . . . Նայեցէք ինձ, չքնաղ Նինի . . .

— 0 — o — o . . .

— Մի ժպիտ, մի անուշ, հոգեկան ժըպիտ և ես վերջացրած կլինեմ իմ նախաճաշը . . .

— Զար . . .

— Եւ բարի . . .

— Այս, և բարի . . .

Փայտը թեկ տակ և երկու ձեռքով ամուր բռնած, Սեակը հանդարտ քայլերով բարձրացաւ համալսարանի երկրորդ յարկը, առանց նայելու ուսանողներին, անցաւ նըրանց միջով, և զնաց կանգնեց համալսարանի դէպի պարտէզ նայող լուսամուտներից մէկի առաջ և յափշտակութեամբ սկսեց դիտել գաշտանկարը, որ գծւում էր հանդիպակաց լեռան սնորոսում և բուռը հեշտանքով ժպառում, զգւում արևի սիրատապահուագիթներին:

Նայեցէք այս կախարդին . . . 0, դու անկուշ ճիւաղ . . .

— Մի ասէք այդ, Գլէք. բողոքեց լիդան:

— Եւ դուք պաշտպանում էք ձեզ տապալողին, Լիդա:



— Սևակը յանցաւոր չէր, երբ ես վարչւեցի ըստ իմ բնագդի . . .

— Սակայն նա չպէտք է թոյլ տար . . .

— Այդ իմ իդն էր . . . ես սպասում էի . . . Ամբողջովին տրւած էի . . . ես ինձ երջանիկ էի գտնում . . .

— Ուրեմն . . .

— Նա ազնիւ է և շատ յարգելի քան այն պարոնները, որ խօսում և խորշում են նրանից:

— Նա միայն արատաւորում է ուստ նողութիւնը . . .

— Ոչ, ոչ, Գլէր—ընդմիջեց նրան լիդան—դուք սխալում էք՝ Սևակը առաքինի է . . . Նա իւր կեանքը ընծայաբերել է գեղեցիկին՝ վսեմին . . . Դէպի որը պէտք է ձգտենք և մենք՝ համալսարանի շեմք մաշողներս . . .

— Դուք դեռ ենթակա էք նրա կախարդութեան . . .

— Նա կախարդել չպիտէ, երդւում եմ ձեզ:

— Երկի դուք պատրաստէք նորից յարւելու նրան:

— Օ, եթէ ինձ այդ յաջողուէ . . . մըմնաց լիդան սեղմած շրթունքների միջով:

— Ուրեմն դուք ցանկանում էք կրկին անգամ թրպրտալ այդ լրբի, այդ սրիկայի ճանկերում, որ ընդունակ է միայն յուսահատութիւն ու մահ թողնել իւր յետեռում . . .

— Պահէք ձեր չար լեզուն և մի համարձակւէք անւանաբեկ առաքինութիւնը:

— Ազատ էք . . . Օրիորդ լիդա, ասաց Գլէրը զայրացած և հեռացաւ:

«Սևակը թողեց լուսամուտը և փայտը դարձեալ սեղմած թեկի տակ, սկսեց փոքր քայլերով շրջել միջանցքում:

«Համալսարան . . . Մեծագորդ անուն . . . Եւ տենչալի, և խորհրդաւոր . . . Գիտութեան, վեճի ու գեղեցիկի տաճար՝ սրբարան . . . Հա, հա, հա . . . Որպիսի ճարպիկ կատակ . . . Ինչպիսի դառը խարէութիւն . . . Թշւառ խեղկատակներ . . .

«Կ եանք . . . Ահա որտեղ է խորհրդա-

ւորը . . . Ահա ուր պէտք է վնասուել գեղեցիկը . . . մտմտաց Սևակը և կանգ առաւ Լիդայի առաջ:

— Գեղեցիկ Լիդա, ինչպէս էք:
 — Շատ բարի էք, Սևակ:
 — Եւ բարի, և չար . . .
 — Երբէք՝ չարութիւնը ակնածում է ձեզնից և շատ հեռու փախչում:
 — Իսկ ես ենթակա եմ նրան և . . .
 — Ամենեին, Սևակ:
 — Եւ նա է իմ raison d'être . . .
 — Սևակ . . .
 — Տիուր էք, գեղեցիկ Լիդա. և ձեր նուշ աչերը դժւարութեամբ են նայում վշտի ու տանջանքի միջով, որ ընդգրկել են ձեր քնքուշ հոգին . . .
 — Այդպէս էլ լինելու էք . . .
 — Եւ թախիծը վանել է ձեր դէմքից ժպիտն ու ծիծաղը, խինդն ու ուրախութիւնը . . .
 — Ես կորցրեցի ամեն ինչ . . . յարգելի Սևակ. պատասխանեց Լիդան խոնարհելով

իւր թաց աչքերը:
 — Դուք ապաւինել էք յուսահատութեան . . . Նազելի Լիդա:
 — Որ թափանցել է մինչև ողնուզեղու և հիւծում, սպառում է ինձ . . .
 — Լսում էք, Լիդա, դասախոսութեան զանգը հնչում է:
 — Նա այլևս խորթ է ինձ համար . . .
 — Զուր . . . Դուք շատ բան կորցնէք . . .
 յարեց Սևակը քմծիծաղ:
 — Ես էլ ոչինչ չունեմ կորցնելու . . .
 — Յանութիւն, սիրունիկ Լիդա:
 — Դուք գնում էք, Սևակ:
 — Ներքեւ եմ իջնում, — նա ցոյց տւեց պարտէզը — մի փոքր շնչելու ծաղկանց անուշհոտութիւնը, և թարմանալու նրանց հմայքով, գեղեցկութեամբ . . .
 — Ինձ էլ տարէք ձեզ հետ, պաշտելի Սևակ:
 — Գեղեցիկը գեղեցիկների մէջ . . . այնպէս չէ, քաղցրիկ Լիդա, ասաց Սևակը Ժպտալով և զգուշութեամբ բռնեց նրա

փոքրիկ ձեռքից:

— Անարդ լիրդ, ստոր ցինիկ . . . դեռ
շարունակում ես ոստայն հիւսել . . . մա-
մուացինուսանող-ուսանողուհիները բարկու-
թեամբ և մտան լսարան:

Հորիզոնում արեի ուշացած ցոլքերը,
մոլորւած երեխաների նման, անմտօրէն
պահ մի վազվում էին լեռների յաղթ կա-
տարներին և ապա հեալով վազում, փար-
ում հեռւում թագնուող իրենց մօրը:

Գեաը ջինջ, որպէս կոյսի կապուտ
աչերը, և ծփանուր, անհանգիստ, ինչպէս
նրա հարուստ կրծքի հեքը, անուշ վշոցով
գլորւսում էր նոճիների միջով և գրկախառ-
նւում ձախ կողմից իւր գոգը մանող վտակի
չարաճճի, պղտոր ջրերին:

— Դուք ուշադիր էք, թէ ինչպէս հովը
քաղցը մարմանջով խօսում է սիրահար տե-
րեներին և նրանց համար հիւսում, յօրինում
գեղեցիկի զրոյցներ, պատմութիւններ. դի-

մեց Սիակը ընդառաջելով Գետախառնուրդ
եկող օրիորդին:

— Ես լսում եմ միայն ձեր հնչուն
ձայնը, որ կախարդում է իմ լսողութիւնը . . .

— Կամ տեսնում էք, թէ ինչպէս դի-
շերը արագ-արագ փաթաթում է զմբուխտ
անտառը և նրան լուծում իւր մասը, ոև
զրկում:

— Ես տեսնում եմ միայն ձեր խաղաղ
դէմքը, տիրաբար իշխում է իմ էութեան . . .

— Օ, յարգելի օրիորդ . . . Դուք կաշ-
կանդել էք ձեր ազատասէր կամքը . . .

— Ես չեմ ցանկանում նսեմացնել իմ
հոգին պարփակող երջանկութիւնը, գեղեց-
կութիւնը . . .

— Գեղեցի կութիւն . . .

— Ենեղը ու անսահման . . .

— Որպիսի բարեբախտութիւն . . .

— Եւ գուք . . .

— Օ, ոչ, ոչ . . . Տարիներից ի վեր ես
միայն վնասում եմ . . .

— Ա—ա—ա . . .

— Եւ թւում է, որ ես պէտք է քայ-
լեմ իմ ամբողջ կեանքում, առանց գտ-
նելու...

— Դուք վնտում էք գեղեցիկը, երբ...

— Գեղեցիկը՝ ներքեսում հոսող վտակի
մըմունջն է, իւր միալար մեղեղիով:

— Միայն:

— Եւ վերջալուսի դունեղ կրակը երե-
կոյեան վառվուն շամանդաղում:

— Միայն:

— Գեղեցիկը՝ սաղարթների խորքում
համերգող թռչունների ներդաշնակ գեղե-
ղանքն է՝ նրանց սիրո երգը:

— Միայն:

— Եւ անհունի ծոցում աստղերի մեղ-
միկ ժայռալ, և սերովելների հոգերուխ օրհ-
ներգութիւնը:

— Միայն:

— Գեղեցիկը՝ արշալոյսի հրդեհի տակ
լճակի նազանքով զարթնելն է, և ալիքների
մանկական յօրաննջը՝ խօլական դրկախառ-
նութիւնը:

— Միայն:

— Եւ լեռնալանջում ծաղիկների երփ-
ներանգ խմբերը՝ նրանց սիրատարփիկ
ծփանքը:

— Միայն:

— Գեղեցիկը ...

— Իսկ այստեղ, այստեղ ... ընդհա-
տեց նրան օրիորդը կորցնելով իւր սառ-
նասրառութիւնը:

— Ես կարօտ եմ... Ես ծարաւի ...

— 0—o—o ...

— Այս, յարգելի օրիորդ ... Տարիներ
շարունակ ես վնտում եմ գեղեցիկը՝
վսեմի ջատագով ... Թւում է, որ այս կա-
հեռում, բայց երբ ես մօտենում եմ,
ամեն ինչ փոխում է պատրանքի և ցն-
դում, ինչպէս կապուտի ծոցում լուծուղ
մշուշը:

— Իսկ ես... մրմնջաց օրիորդը դո-
ղալով:

— 0... Դուք գեղեցիկ էք... Եւ ձեր
գեղեցկութիւնը իսկոյն կցնդէ, հենց որ... ,

Ոչ, ոչ . . . գեղեցիկ օրիորդ:

— Եաբունակեցէք, աղաչում եմ . . .
ասաց պինդ սեղմելով Սևակի ձեռքը իւր
այրող ափի մէջ:

— Ես սարսափում եմ, երբ կի՞նը ցնց-
ւում, գալարւում է իմ կրծքի վրա . . . ինձ
հալածում են կանաց մարմնից վչող կիրքն
ու զգայասիրութիւնը . . . Եւ ես հեռու,
շատ հեռու եմ փախչում նրանցից և հե-
ռուներում շարունակում իմ փնտում-
ները . . .

— Եւ կանայք, ինչպէս կըակի շուրջը
փռփռացող թիթեռներ, այրում են ձեր
գրկում իրենց գեղեցկութիւնը . . .

— Ճիշտ այդպէս:

— Եւ նրանք դարձեալ ձդտուն են դէ-
պի ձեզ . . . յարեց օրիորդը փայլող աչ-
քերով:

— Անդադար . . .

— Եւ դուք լքում էք նրանց:

— Հէնց այն վայրկեանից, երբ նրանք
էլ գեղեցիկ չեն . . .

— Այնուամենայնիւ ես օրիորդ եմ ձեզ,
պաշտելի Սևակ. ասաց օրիորդը բռնելով
նրա միւս ձեռքը ես:

— Օրիորդ . . .

— Զեր բիբերի խորութիւնը իրենց սե-
շը շանակում այրում, տոչորում է իմ հո-
գին . . .

— Սիրահար օրիորդ . . .

— Ես կտամ ձեզ և գեղեցիկը և վսեմը . . .

— Միանգամայն երախտապարտ եմ:

— Եւ ամեն ինչ . . .

— Խաբէութիւն . . .

— Այժմ գրկեցէք ինձ, Սևակ՝ ես անէ-
անում եմ . . .

— Օրիորդ . . .

— Սեղմեցէք ինձ ձեր գրկում այնքան
ամուր, որ ես դադարեմ գիտակցելուց . . .
Ասաց նա տեղալով Սևակի գէմքին ջերմ
համբոյրների մի ջղային տարափ:

• • • • • • • • • • • • • • •

— Այժմ . . .

— Դուք զնում էք, ճշաց օրիորդը դաւ-
կանալով։
— Ես պէտք է քայլեմ . . .
— Անսի-իրա . . .
— Ես գնտում եմ գեղեցիկը . . .
— Ա-հ . . . Նա տարածեց իւր թոյլ
թևերը դէափ Սևակը և նրա հեկեկանքները
արձագանք տւին ու լոեցին անհունի խոր-
քում։



ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. Ա. Մաշիկի

10412

Armenian
12-6133/22

Հոյս են տեսել մեր ու իմ էպիգրամա-
րից»

Մենամարտ
Տարօրինակը:

ԳԻՆԵ է 7½ ԿՊՊ.

Յանկացողները կարող են դիմել
Издырь. — Книжный Магазинъ Мамбре
Терь-Товмасяна.

ՀՀ Ազգային գրադարան



NL0835150

